

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Քննարկի Միոգոյան*

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

### Արաբագիտություն

*Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ).....10-21

*Մերի Չիլիսիյան*

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

*Հարություն Մաթևոսյան*

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

*Համիկ Երիցյան*

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

### Թյուրքագիտություն

*Վարուժան Գեղամյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

*Մարիամ Մելքոնյան*

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ ..... 72-86

*Ռաֆիկ Խաչատրյան*

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ ..... 87-98

*Գառնիկ Դավթյան*

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ ..... 99-105

*Թամարա Աղանայան*

ՊԱՆԹՈՒՐԹԻՍ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐԶԻՎՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.) ..... 106-117

**Իրանագիտություն**

*Լիանա Պետրոսյան*

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 118-123

*Անի Նահապետյան*

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ..... 124-140

*Նարե Գևորգյան*

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 141-152

*Յասեր Քարամզադե Հաֆթխանի*

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ..... 153-160

## CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

### Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

### Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

### **Iranian Studies**

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE" .....	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ' AL-  
MAWĀT ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

*Քանալի քառեր՝ Դուրան, հադիս, գյուղատնտեսություն, Ihyā' al-Mawāt, Fard al-Kifayah*

*«Երբ դատաստանի օրը գա և ձեզանից որևէ մեկի ձեռքում սածիլ լինի, ապա թող տնկի այն»<sup>2</sup>*

Իսլամի տարածման ու Մուհամմադ մարգարեի քարոզչության գործում տնտեսությունը էական դեր ու նշանակություն է ունեցել: Այդ մասին վկայում են թե՛ Դուրանի այաթները, և թե՛ Մարգարեի հադիսները: Տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ առևտուրը, մշտապես եղել է իսլամի պատմության բաղկացուցիչ մասերից մեկը՝ կապված առաջին հերթին Մեքքայի՝ դեռևս նախաիսլամական շրջանում որպես առևտրային գործունեության հիմնական կենտրոն լինելու հանգամանքի հետ: Մարգարե Մուհամմադը Մեքքայի առևտրային կենտրոն լինելը դիտարկում էր իսլամի քարոզչությունն իրականացնելու համար լավագույն ուղիներից մեկը: Վաղ շրջանի մուսուլմանները առևտրով զբաղվելիս մեծաթիվ ճանապարհորդություններ էին իրականացնում դեպի աշխարհի տարբեր կողմեր, ինչի արդյունքում իրենց հետ իսլամը հասցնում էին մինչև արևելյան և արևմտյան Աֆրիկա, արևելյան Ասիա:<sup>3</sup> Մարգարեն առևտրականներին խրախուսում էր իրենց գործում և նրանց աշխատանքը որակում որպես՝ «Ալլահի առատաձեռնության որոնում»:

*«...մյուսները թափառում են երկրով մեկ, ցանկանալով (գտնել-Իբն Թալիդ<sup>4</sup>) Ալլահի առատաձեռնությունից, և մյուսները կռիվ են մղում Ալլահի ճանապարհին...» (Ղ.-73:20)*

<sup>1</sup> ԵՂՀ արարագիտության ամբիոնի մագիստրանտ, էլ-փոստ՝ meri.chplakhyan@ysumail.am

<sup>2</sup> ص. 126 البخاري، الادب المفرد، 222 باب- اصطناع المال، 479، القاهرة، 1951

<sup>3</sup> Kattih, Abdourahman, “Islam & Business”, The Islamic Education And Services Institute, <https://ribh.wordpress.com/2008/01/27/islam-and-business/>, November 2008

<sup>4</sup> تفسير ابن كثير <https://quran.ksu.edu.sa/tafseer/katheer/sura73-aya20.html>

Այաթը համեմատական է անցկացնում առևտրականների աշխատանքի և Ալլահի ճանապարհին կովորների միջև, այս կերպ կարևորելով նրանց գործունեությունը: Բացի առևտրից իսլամը կարևոր նշանակություն է տալիս տնտեսության մյուս ճյուղին՝ գյուղատնտեսությանը:

Ղուրանում և Մարգարեի հադիսներում գյուղատնտեսությունը համարվել է ապրուստ վաստակելու հիմնական և կարևորագույն միջոցներից մեկը: Իսլամի տեսանկյունից գյուղատնտեսությունը դիտարկվում է հասարակության պարտավորությունների՝ Fard al-Kifayah-ի կարևորագույն մասը:<sup>5</sup> Այս պարագայում գյուղատնտեսության արդյունքում ստացված վաստակը համարվում է հալալ՝ օրինական: Որպես այդպիսին, ըստ Իսլամի, այս կարևոր ոլորտում ներգրավվելը պատվաբեր աշխատանք է համարվում մարդկության համար, քանի որ անձը, ով զբաղվում է գյուղատնտեսությամբ, հոգ է տանում ոչ միայն իր՝ այլ ողջ համայնքի մասին: Իսլամում սա նման է նվիրատվության (sadaqah):<sup>6</sup>

*«Ալլահի ճանապարհին իրենց ունեցվածքը ծախսողների օրինակը նման է սերմի, որը անեցրել է յոթ հասկեր, և յուրաքանչյուր հասկի վրա՝ հարյուր սերմ: Եվ Ալլահը կրկնապատկում է (պարզևր<sup>7</sup>) նրա՝ ում ցանկանում է...» (Ղ.-2:261)*

Չարգացնելով վերոնշյալը, Ալ Կուրտուբին առաջարկում է այաթի մեկնության այն տարբերակը, ըստ որի գյուղատնտեսությունը մուսուլման հասարակության պարտավորություններից է և վաղ թե ուշ այն կդառնա մարդկության եկամտի կարևորագույն աղբյուրը:<sup>8</sup> Այս մասին է փաստում նաև լայն շրջանառվող Ihyā' al-Mawāt<sup>9</sup> հայեցակարգի գոյությունը, որը ենթադրում է հողի սեփականության իրավունքի մոդելը իսլամում: Գյուղատնտեսությամբ զբաղվելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր կարգավորել հողի սեփականության և դրա տնօրինման շուրջ առկա խնդիրները, որոնց անդրադարձ է կատարվել Մարգարեի մեծ թվով հադիսներում:

<sup>5</sup> الواجب الاجتماعي، عمر محمد جبه جي، الإمارات-العین، ص. 7

<https://islamsyria.com/portal/uploads/CMS/library/100120160125045843.pdf>

<sup>6</sup> Mohd. Effendi Norwawi (2006), “Food Security from the Malaysian Perspective”, in Shaikh Mohd Salleh, et al., Food and Technological Progress: An Islamic Perspective, Kuala Lumpur: MPH Group Printing (M) Sdn. Bhd., p. 7.

<sup>7</sup> تفسير القرطبي <https://quran.ksu.edu.sa/tafseer/qortobi/sura2-aya261.html#qortobi>

<sup>8</sup> Muhammad Ridhwan Ab Aziz, Agriculture and agribusiness from the perspective of Al-Qur'an and Al-Sunnah, Jurnal Usuluddin, USIM, 2009

<sup>9</sup> Մեռած (անմշակ հողի) վերածնունդ



«Նա՛ ով հող է տանում (մշակում է) այն հողը, որը իրեն չի պատկանում, ուրեմն արժանի է (դրան)»<sup>10</sup>

Հաղիսը փոխանցվել է Աիշայից և տեղ է գտել Բուխարիի ժողովածուում: Ihyā' al-Mawāt-ի մասին կարելի է գտնել նաև Ահմադ իբն Համբալի, Ալ Թիրմիզիի և այլոց ժողովածուներում:<sup>11</sup> Ընդհանուր առմամբ կարելի է հաղիսներից եզրակացնել, որ անմշակ հողերի վերականգնումը օրինական է համարվում շարիաթով, ինչը իրենից կարող է ենթադրել գյուղատնտեսական տարրեր ծրագրեր, ոռոգում, ցանկապատում, շինության կառուցում և այլն: Ելնելով վերոնշյալ և Ihyā' al-Mawāt-ին անդրադարձող մի շարք հաղիսներից՝ ֆակիհների մեծ մասը պնդում է, որ այն հողը, որը չունի սեփականատեր և նրանում նախկինում որևէ մեկը մշակությամբ չի զբաղվել, ապա կարող է պատկանել նրան, ով հաջողությամբ այն մշակում է: Նրանք նաև պնդում են այն, որ հողը, որը ունի սեփականատեր, պետք է մշակվի միայն նրա կողմից և ուրիշ ոչ մեկի:<sup>12</sup> Մագհաբներում այս հարցի հետ կապված հիմնականում նույն միտքն է արտահայտվում, տարբերությունները կապված են միայն ժամանակային սահմանափակումների և որոշ այլ պայմանների առկայության հետ<sup>13</sup>:

Ihyā' al-Mawāt հայեցակարգի գոյությունն ու լայն կիրառությունը հաղիսներում հայտնում է այն մասին, որ դեռևս Մարգարեի օրոք մեծ կարևորություն է տրվել գյուղատնտեսական գործունեություն ծավալելուն, ինչի արդյունքում շատ հաճախ հող չունեցող անձինք պարզևատրվում էին՝ իրենց իսկ մշակած հողերի սեփականատերերը դառնալով:

Հաղիսներում տեղ գտած տվյալները, անշուշտ, բխում են Ղուրանից: Անմշակ հողերի կենդանացման մասին անդրադարձ կա նաև Ղուրանում.

«Նրա նշաններից է, որ տեսնում ես հողը ամուլ (անպտուղ-Ալ-Տաբարի), և երբ նրա վրա չուր իջեցնենք, այն (հողը-Ալ Տաբարի) կշարժվի (բուսականության

<sup>10</sup> البخاري، صحيح البخاري، كتاب المزارعة، باب من احيا ارضا مواتا، حديث رقم 2335

<sup>11</sup> Մանրամասն տես՝ Ahmad Suhendra, Models of land ownership in Islam: Analysis on Hadis Ihyā' al-Mawāt, "Esensia", State Islamic University of Sunan Kalijaga Yogyakarta, 2017

<sup>12</sup> Muhammad Ridhwan Ab Aziz, Agriculture and agribusiness from the perspective of Al-Qur'an and Al-Sunnah, Jurnal Usuluddin, USIM, 2009

<sup>13</sup> Նույն տեղում:

*անու-Ալ Տաբարի) և կհագենա: Բրականում նա՝ ով կենդանացրեց այն (հողը- Ալ Տաբարի) կկենդանացնի նաև մեռյալին: Նա ամենակարող է:»<sup>14</sup> (Ղ.-41:39)*

Գյուղատնտեսության կարևորությունը Ղուրանում առաջին հերթին ընդգծվում է ջրի կենսական նշանակությանը անդրադարձ կատարելով.

*«Արդո՞ք չտեսան նրանք, ովքեր անհավատ դարձան, որ Երկինքն ու Երկիրը մեկ ամբողջություն էին, և մենք դրանք առանձնացրինք ու ջրից <sup>15</sup> արարեցինք ամեն կենդանի բան, մի՞թե նրանք չեն հավատում» (Ղ.-21:30)*

Այաթը առաջարկում է այն միտքը, որ ողջ բուսական և կենդանական աշխարհի արարման սկիզբը դրվել է ջրով, որը Երկնքից է ուղարկվել: Ապա ջրի կարևորությունը ընդգծվում է այն կապելով գյուղատնտեսական գործունեության հետ.

*«Նմանապես երկրային կյանքը նման է ջրին, որը մենք իջեցրինք Երկնքից, որա հետ խառնվեցին (անեցին-Ալ-Տաբարի)<sup>16</sup> Երկրի բուսականությունը, որով սնվում են մարդիկ և կենդանիները...» (Ղ.-10:24)*

Խորը ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք առանձնացնել գյուղատնտեսությանն անդրադարձող այաթների իմաստային տարբերակման մի քանի խմբեր: Առաջին խմբում կարելի է ներառել այն այաթները, որոնցում ներկայացվում է գյուղատնտեսության ծագումը, և դա կապվում՝ անմիջապես Ալլահի անվան հետ.

*«Թ՛ող, նայի մարդը իր անեղին» (Ղ.-80:24)*

*«Ինչպես մենք ջուր (հողը անձրև-Իբն Քասիր)<sup>17</sup> թափեցինք (երկնքից-Իբն Քասիր)<sup>18</sup>» (Ղ.-80:25)*

*«Հետո պատռեցինք Երկիրը (նրանից բույսեր հանելով-Ալ Տաբարի)<sup>19</sup> (Ղ.-80:26)*

*«և նրանում սերմ անեցրինք» (Ղ.-80:27)*

*«և խաղող ու առվույտ» (Ղ.-80:28)*

*«և ձիթապտուղ ու սրմալ» (Ղ.-80:29)*

*«ձեզ և ձեր կենդանիների համար» (Ղ.-80:32)*

<sup>14</sup> الطبري تفسير <https://quran.ksu.edu.sa/tafseer/tabary/sura41-aya39.html#tabary>

<sup>15</sup> Մեկնողների մի մասը գտնում է, որ ջուրը սպերմն է՝ նուտֆան:

<sup>16</sup> الطبري تفسير <https://quran.ksu.edu.sa/tafseer/tabary/sura10-aya24.html>

<sup>17</sup> تفسير ابن كثير <https://quran.ksu.edu.sa/tafseer/katheer/sura80-aya25.html>

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> الطبري تفسير <https://quran.ksu.edu.sa/tafseer/tabary/sura80-aya26.html#tabary>

Վերոնշյալ և մեծ թվով այլ այաթներում<sup>20</sup> հաստատվում է այն միտքը, որ Ալլահն է հիմք դրել գյուղատնտեսությանը և այն աստվածային պարզև է: Նման այաթներում շեշտը դրվում է հատկապես Ալլահի կարողությունն ու բարեհոգությունը ընդգծելու վրա:

Գյուղատնտեսությանն անդրադարձող այաթների մյուս խումբը արդեն իսկ կենտրոնանում է վերջինիս կարևորության և մարդկության գոյատևման համար կարևորագույն աղբյուր լինելու վրա: Նման այաթներից, թերևս, հատկանշական է առանձնացնել Ալ-Բակարա սուրայի 265-րդ այաթը.

*«Ալլահի նանասարհին իրենց ունեցվածքը ծախսողները, ովքեր ձգտում են նրա գոհունակությանը իրենց հոգով վատահոյությամբ (որ Ալլահը արդար է-Ալ-Տաբարի<sup>21</sup>) նման են բլրի վրայի այգու, որում հորդառատ անձրև տեղաց և այն կրկնակի բերք տվեց...» (Ղ.-2:265)*

Վերոնշյալ այաթի առանձնահատկությունն այն է, որ նրանում տրվում է հավատացյալի համեմատությունը բերքառատ այգու հետ և այդ կերպ նորովի ընդգծվում գյուղատնտեսության դերը իսլամում: Այաթներից մյուսներում նշվում է, որ գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունը մարդկությանը շնորհված մեծ հարստություն է, որի կորստի սպառնալիքով սատանան վախեցնում է մարդկանց.

*«Սառանան ձեզ աղքատություն է խոստանում և դրդում է գարշելիության, իսկ Ալլահը ձեզ ներում է խոստանում ու առատաձեռն պարզև...» (Ղ.-2:268)*

Կորստի մասին նշվում է նաև Ալլահի պատիժներում.

*«Արդո՞ք ձեզնից որևէ մեկը կցանկանար ունենալ արմավենիների ու խաղողի այգի, որի ներքևում հոտում են գետերը ու նրա համար կա ամեն տեսակի բերք, և նրան վրա հասնի տարիքը ու նա ունենա թույլ սերունդ, և այգում կրակոտ փոթորիկ լինի ու այգին այրվի...» (Ղ.-2:266)*

Նմանատիպ այաթները ավելի են ընդգծում գյուղատնտեսական գործունեություն ծավալելու անհրաժեշտությունը: Տվյալ դեպքում այաթը կրում է նախագուշակական բնույթ, ըստ որի՝ Ալլահը, որքան բարեհոգի է գտնվել և մարդկությանը շնորհել է ապրուստի

<sup>20</sup> Տե՛ս Ղ.-16:10, 55:10,11,12,13, 15:22

<sup>21</sup> تفسير الطبري <https://quran.ksu.edu.sa/tafseer/tabary/sura2-aya265.html>

կարևորագույն աղբյուրներից մեկը՝ գյուղատնտեսությունը, նույնքան դաժան կարող է գտնվել և զրկել նրանց վերջինիցս: Այս մտքի հետքերով գնալիս արդյունքում պարզ է դառնում, որ Ալլահը իրականում նման կերպ արդեն իսկ պատժել է մարդկությանը:

Գյուղատնտեսության մասին հիշատակող այաթների երրորդ խմբում կարելի է առանձնացնել այն այաթները, որոնցում Ալլահը պատժել է մարդկությանը՝ նրանց զրկելով իրենց մշակած այգիներից: Այս հարցով դիտարկման է ենթակա Սաբա ցեղի պատմությունը, որը տեղ է գտել Դուրանում: Սաբայի ցեղը հայտնի էր գյուղատնտեսական գործունեությամբ և առաջադեմ գյուղատնտեսական տեխնոլոգիաներով: Հայտնի է, որ Սաբայի ցեղը տիրապետում էր մեծ թվով մրգի այգիների<sup>22</sup>:

*«Սաբան (ցեղը-Ալ-Կուրտուբի) իր բնակավայրում ուներ նշան (աստվածային կարողության-Ալ-Կուրտուբի). երկու այգիներ աջ և ձախ (կողմերում-Ալ-Կուրտուբի)<sup>23</sup>...» (Ղ.-34:15)*

Այս այաթում, ըստ իբն Բասիրի, Ալլահը պատմում է Եմենում ապրող Սաբա ցեղի (Qabilah) մասին, ովքեր ապրում էին երջանիկ և բարգավաճող երկրում<sup>24</sup>: Այնտեղ ճանապարհները երկկողմանի այգիներով էին պատված՝ աջ և ձախ, այնպիսի դասավորությամբ, որ ցանկացած դիտանկյունից երևում էին երկու այգիներն էլ: Սաբայի կայսրության տիրապետության տակ էին մեծ թվով վարելահողեր և պտղատու այգիներ: Նրա բնակիչները ապրում էին խաղաղության և ներդաշնակության մեջ: Ալլահը հրամայել էր Սաբայի ժողովրդին վայելել նրանց տրված ողջ կենսամիջոցները և դրա համար շնորհակալ ու երախտապարտ լինել ամենակարող Ալլահին:<sup>25</sup> Սակայն Սաբայի ժողովուրդը մերժում և չի ընդունում Ալլահի կարգադրությունները, ինչի արդյունքում վերջինս նրանց զրկում է իրենց ունեցվածքից և գյուղատնտեսական հողերից.

*«Նրանք շեղվեցին (միաստվածությունից, Ալլահին երկրպագելուց-Իբն Բասիր)<sup>26</sup> և մենք նրանց վրա հեղեղ ուղարկեցինք: Եվ փոխարինեցինք նրանց*

<sup>22</sup> Muhammad Ridhwan Ab Aziz, Agriculture and agribusiness from the perspective of Al-Qur'an and Al-Sunnah, Jurnal Usuluddin, USIM, 2009, p. 329

<sup>23</sup> تفسير القرطبي <https://quran.ksu.edu.sa/tafseer/qortobi/sura34-aya15.html#qortobi>

<sup>24</sup> تفسير ابن كثير <http://quran.ksu.edu.sa/tafseer/katheer/sura34-aya15.html>

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> تفسير ابن كثير <http://quran.ksu.edu.sa/tafseer/katheer/sura34-aya16.html>

*երկու այգիները երկու այլ այգիներով, որոնցում դատը մրգեր են, կարմրան և քիչ քանակով փշոտ հապարսա»:* (Ղ.-34:16)

*«Այդպես մենք պատժեցինք նրանց, որովհետև նրանք անհավատ դարձան, արդյո՞ք մենք պատժում ենք որևէ մեկին՝ բացի անհավատներից»* (Ղ.-34:17)

Ալլահի նման կերպ պատիժները չեն սահմանափակվել միայն վերոնշյալով: Այդ մասին մեծ թվով վկայություններ կան նաև այլ այաթներում:<sup>27</sup> Այս խմբի այաթներում, անհավատության և Ալլահի ճանապարհից շեղվելու դեպքում մարդկանց պատիժը իրենց այգիներից և մշակությամբ զբաղվելու հնարավորությունից զրկելը սահմանելը՝ ընդգծվում է գյուղատնտեսության մեծ դերն ու նշանակությունը:

Ղուրանում որքան խրախուսվում է տնտեսությունը, այգիների մշակումը և արդար կերպով սննդի վաստակումը, այդուհանդերձ, Ալլահը մարդկանց շատ անգամ նշաններ է ուղարկում, որ դրանք բոլորը երբեք չկարևորեն իրեն երկրպագելուց: Այս վերջին խմբում առանձնացրել ենք այն այաթները, որոնցում Ալլահը զգուշացնում է մարդկանց, որ երբեք իրենց ունեցվածքը վեր չդասեն Աստծուն հնազանդվելուց և նրա հրամանները կատարելուց:

*«Ո՛վ, դու՛ք, ուլքեր հավատացիք, թո՛ղ, ո՛չ ձեր որդիները, ո՛չ ձեր ունեցվածքը ձեզ չշեղեն Ալլահին ոգեկոչելուց, իսկ ուլքեր այդպես կանեն, նրանք կորուստներ կկրեն»* (Ղ.-63:9)

Այաթում Ալլահը մարդուն նախազգուշացնում է չշեղվել իրեն երկրպագելուց, անգամ եթե հարցը վերաբերի նրա գլխավոր հարստություններին՝ գավակներին և ունեցվածքին, հակառակ դեպքում մեծ կորուստներ կունենա: Նույն միտքը հանդիպում ենք Ալ-Ջումաա սուրայի իններորդ այաթում.

*«Ո՛վ, դու՛ք, ուլքեր հավատացիք, երբ կանչում են ուրբաթ օրվա աղոթքի, ապա ձգտե՛ք Ալլահին ոգեկոչելուն և թողե՛ք առևտուրը, դա (Ալլահին յսելը և հնազանդվելը-Իբն Քափր<sup>28</sup>) ձեզ համար լավ է, եթե միայն հասկանալիք»* (Ղ.-62:9)

Այստեղ ևս մեկ անգամ շեշտվում է, որ մարդու համար չկա ավելի կարևոր և անհրաժեշտ որևէ զբաղմունք կամ աշխատանք, քան

<sup>27</sup> Տե՛ս Ղ.- 18:35, 18:42, 89:6-10, 7:163,166, 5:60, 39:22:

<sup>28</sup> تفسير ابن كثير <https://quran.ksu.edu.sa/tafseer/katheer/sura62-aya9.html>

Ալլահին երկրպագելն է ու նրան հնազանդվելը: Դուրանի մեծ թվով այլ այլաթներում ևս հաստատվում է այս միտքը:<sup>29</sup>

Այսպիսով՝ գյուղատնտեսությունը իսլամում համարվում է հասարակության պարտավորությունների մի մաս, որով զբաղվելը ո՛չ միայն խրախուսվում է, այլև՝ պարտադրվում: Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու անհրաժեշտության մասին հիշատակվել է և՛ Դուրանում, և՛ Մարգարեի հաղիաներում: Դուրանում գյուղատնտեսության համապարփակ պատկերը ստանալով՝ պարզ է դառնում, որ այն Ալլահի կողմից մարդկությանն ուղարկված պարզ է, որով մարդիկ պարտավորվել են զբաղվել և իրենց արդար աշխատանքով վաստակել իրենց ապրուստը: Դուրանում գյուղատնտեսության կարևորությունն ընդգծվում է, երբ անհավատության դրսևորման շատ դեպքերում Ալլահի պատիժը լինում է մարդկանց իրենց այգիներից և իրենց մշակած հողերից զրկելը: Ալլահը մարդուն տալիս է աշխատելու ու զարգանալու, իր վաստակով իր ընտանիքը կերակրելու հնարավորություն, բայց որքան այդ ամենը խրախուսվում է, այդուհանդերձ մարդու ամենամեծ առաքելությունը մնում է Ալլահին հնազանդվելն ու երկրպագելը:

## «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR'AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ' AL-MAWĀT»

*Meri Chplakhyan*  
(Summary)

This article examines the concept of agriculture from the spirit of al-Qur'an. Al-Qur'an as the main source of Islamic jurisprudence emphasizes the importance of agriculture in the daily life of a Muslim and it views the agricultural sector as an obligation of the society (*Fard al-Kifayah*). In this article, there is also a discussion of land ownership from the perspective of the revival of the dead earth (Ihya 'al-Mawāt). The concept "Ihya 'al-Mawāt" is the rehabilitation of idle land by constructing a building or doing agricultural projects. The finding shows that Al-Qur'an gives a clear message to the Muslims that getting involved in this important sector is an honourable endeavour.

<sup>29</sup> Տե՛ս Դ.- 24:37, 68:17-29, 2:61, 9:24